«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Միջվարժարանային հանրապետական օլիմպիադա 2019թ.

11-12-րդ դասարաններ

1. Այս կղզիախմբի մեծ կղզուն թարգմանաբար կոչում են «գլխավոր կղզի»: Մյուսը «ճանապարհ է ցույց տալիս դեպի հյուսիս», մեկին անվանում են «նոր երկիր», իսկ մյուսին «չորս նահանգ» են կոչել: Ո՞ր կղզիախմբի մասին է խոսքը: Թվել կղզիների անունները համապատասխանեցնելով թարգմանությունների հետ: Որ պետությունն է գտնվում նրա վրա, որն է մայրաքաղաքը: Ինչպես է կոչվում երկիրը տեղացիների լեզվով:_____ 2
2. Այդ երկիրը ամենափոքր պետություններից մեկն է աշխարհում, սահմանադրական միապետություն է: Երկրի արտաքին քաղաքական շահերը միջազգային ասպարեզում ներկայացնում է Շվեյցարիան: Տնտեսության հիմքը ֆինանսական ծառայություններն են, միաժամանակ նա Եվրոպայում առաջինն է 1քառ. կմ-ի վրա արդյունաբերական հագեցվածությամբ: Նամականշների վաճառքով ապահովվում է երկրի բյուջեի 10%-ը: Երկրում զարգացած է միջազգային զբոսաշրջությունը: Երկրի անունը թարգմանաբար նշանակում է «թեթև» կամ «փայլուն», «քար»: Որ երկիրն է դա, որն է մայրաքաղաքը: Որոնք են նրա հարևանները:_____1
3. Դուք հավանաբար սովոր եք տեսնել Արեգակը, երկնակամարի հարավային կեսում: Սակայն երկրի վրա կան շրջաններ, որտեղ Արեգակը կարելի է տեսնել նաև հյուսիսում: Դուրս գրեք այն պետությունները, որոնց բնակիչները կարող են տեսնել Արեգակը երկնակամարիհյուսիսային մասում և դասավորեք դրանք հյուսիսից հարավ ուղղությամբ:
   Ուկրաինա, Հնդկաստան, Ուրուգվայ, Կանադա, Կորեա, Նիդերլանդներ, Նոր Գվինեա, Նոր Զելանդիա, Ալժիր, Մոզամբիկ, Իռլանդիա, Անգոլա:_____2
4. Բրազիլիայի բնիկներն այդ երևույթն անվանում են *ամազունու* կամ *պորորոկա:*Երկրագնդի գետերից այդ երևույթը դիտվում է միայն այստեղ՝ մեր մոլորակի ամենաջրառատ գետում: Ո՞րն է այդ երևույթը: Ո՞րն է դրա առաջացման պատճառը: __2
5. Բառաշարքից դուրս գրել ավելորդները _____1
   ա/ շվեդներ, անգլիացիներ, ֆիններ, դանիացիներ, էստոնացիներ
   բ/ ածուխ, նավթ, բոքսիտ, ցեմենտ, տորֆ, պողպատ
6. Դրանց այլ կերպ անվանում են՝ _____2
   ա/Մալվինյան կղզիներ_____
   բ/ Կաբո Վերդե պետ._____
   գ/Զունդ նեղուց_____
   դ/ Պերուական հոսանք_____
   ե/Չուրուն-Մերուն_____
   զ/Նեղոս գետ_____
7. Լրացնել աղյուսակը, նշելով, թե ո՞ր կղզիներն ու թերակղզիներն են բաժանում տրված նեղուցները:_____2

Նեղուցներ	Կղզիներ	Թերակղզիներ
Մեսինայի		
Փոլկի		
Ֆլորիդայի		
Թորեսի		
Յուկատանի		

8. Թվարկել այն գետերը, որոնք հոսում են նշված քաղաքների միջով_____2

ա/Նոր Օռլեան

բ/Աշտարակ

գ/Թբիլիսի

դ/Վարշավա

ե/Սանկտ Պետերբուրգ

զ/Կապան

է/Լոնդոն

ը/Բուդապեշտ

թ/Կիև

ժ/Քյոլն

9. Այս պետության անվանումն առաջացել է նրա արևմտյան սահմաններով ձգվող լճի և արևելյան ափամերձ կղզիներից մեկի անվանումների առաջավանկերից: Նշել լճի, կղզու և պետության անվանումները:_____1

10. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ լ 55^0 և արլ է 70^0: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ին և հունիսի 22-ին, կեսօրին (պատասխանները հիմնավորել հաշվարկներով) _____2

11. Ա բնակավայրի կոորդինատներն են հս լ 36^0, արլ է 56^0, իսկ Բ բնակավայրին՝ հս.լ 20^0, արմ.է.24^0:Որոշել բնակավայրերից յուրաքանչյուրի ժամային գոտին,և ժամերի տարբերությունը: (պատասխանները ստանալ հաշվարկներով): _____1

12. Որքա՞ն է 80000կվտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար պահանջվող քարածխի քանակը տոննայով: (Պատասխանը հիմնավորել հաշվարկով):_____ 2